И. Шибнурлідзе
Цітіму рисулі 48
1874 р.

891.99
Ш-18

ԿԵՆԱՑ ԲԱԺԱԿԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՑԵՐԻՍ ԱՄԱՐՍ

ԳՐԵՑ

Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏԵՏԵՍԵԱՆ

ՕՏԱՒՆ ԳԱԼԱԹԻԱ ՃԱՏՏԻՍԻ

ՏԱՄԱՏԵՍԻՆ ԹԱՆ 465

1874

891.99
S-18

-6 NOV 2011
891.99
S-188

ԿԵՆԱՑ ԲԱԺԱԿԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՑԵՐԻՍ ԱՐԱՐՍ ԲԱԺԱՆԵԱԼ

ԳՐԵՑ

Ա. ՏԱՄԱՏԵԱՆ

Հայ. Գրականության Պետական Հանրային Գրադարան
Հ.Ս.Ս.Հ. Պետական Հանրային Գրադարան
Հ.Ս.Ս.Հ. Պետական Հանրային Գրադարան
Ա. ՍՍԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
7/II-1922
ԵՐԵՎԱՆ, Ազատության հրապարակ
47843
47843

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

ՕՑՈՒՆ ԳԱԲՐԻ ՔԱՏՏԷՍԻ 465 ՏԱՄԱՏԵԱՆ ԽԱՆ

1874

1200

7395-52 Ը

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Ո՛վ ընթերցող, ահաւասիկ նոր կատակերգութիւն մը որ թերեւս (ինչպէս ամէն հեղինակ կ՚երազէ) Հայ գրականութեան մէկ ճիւղին (թէև շատ քիչ) յառաջադիմութեան գրգիռ մ՚ըլլայ կամ լաւ ևս Հայոց մէջ գտնուածներէն քիչ շատ տարբերելով իբր նոր բան աղէկ գէշ ընդունելութիւն գտնէ. և ահա այս յուսոցն է որ համարձակեցայ տպագրել տալ։

Արդ, ընթերցող, ես քենէ մեծ շահ մը չեմ սպասեր, միայն տպագրութեան համար բրած ծախքս ինձ դարձուներս գոհ կ՚ըլլամ. բայց չըլլայ թէ սխալ հասկացողութիւն մը ըլլայ և բրած ծախքս ալ վրայ տալ հարկ ըլլայ և ստիպուիմ անիծել գրողը, տպագրողը և մանաւանդ ընթերցողը։

ԱՆՁԻՆՔ

Վերիկակոս	Իշխան
Վեհունակ	Որդի Իշխանին
Հրապոյր	Սիրահարեալ Վեհունակի
Շաւարշ	Ծառայ մտերիմ Հրապոյրի
Գայլակ	Ծառայ Հրապոյրի
Շուշան	Սպասուհի Հրապոյրի
Բաբիկ	Միմոս
Ամբարտակ	Դաստիարակ Վեհունակի
Սուրակ	Պալատական
Թափուր	Փիլիսոփայ մը
Բշուր	Բժիշկ մը
Կանցուղ	Վաճառական մը
Նենգուստ	Արհեստաւոր
Աբրկիր	Գործաւոր
Համբեր	Երկրագործ

Սիրահարք Հրապոյրի· Թիկնապահք Վերիկակոսի· Ծառայք և այլն

Տեսարանն է Ա· և Գ· Աբարուածներեն Հրապոյրի պան դէջ, իսկ Բ· Աբարուածն Վերիկակոսի պալատին դէջ։

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

ՏԵՍԱՐԱՆ Ա·

ԳԱՅԼԱԿ (առանձին)

Կամ մարդիկ կուրցեր են և կամ ես ճաշակս կորսնցուցած եմ· վաթսուններց տգեղկին մը այսչափ սիրահարներ ունենայ, զարմանալի բան· եթէ կանանց մէջ ջարդ էնայ և միայն տիրուհիս մնայ, դարձեալ անկարելի կը թուի ինձ անոր այսչափ սիրահարներ ունենալը· Անմիտ երիտասարդք, այն գեղանի օրիորդներն կը ձգեն պատն երեսին և կու գան այս խառնածին առջեւ կը քծնին· ինչ էշութիւն· գոնէ հարստութիւն ունենայ· ինչ և իցէ՝ ստակի սիրուն այսպէս բաներ տեղի կ'ունենան· բայց եկու տես որ սիրահարներէն ընդունած նուէրներով օրուան ապրուստը կը հոգայ· իմ խելքս չի հասնիր այս բանին · · · ·

(Շարունակ կ'ունի)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԳԱՅԼԱԿ ԵՒ ՇԱՒԱՐՇ

ՇԱՒԱՐՇ

Անմի՛տ ծառայ, խելքդ չհասած գործերուն չխառնուիս աւելի աղէկ կ՚ըլլայ։ Տեսէք սա իմաստուն փիլիսոփան որ համայն մարդկութիւնը իշու տեղ կը դնէ. ամենքը խենդ են և դու խելացի։

ԳԱՅԼԱԿ

Չէ պա՛րոն, այդ ըսել չեմ ուզեր, բայց շատ ալ խելացի չեմ գտներ այդպիսի կնոջ մը սիրահարելը...

ՇԱՒԱՐՇ

Լռէ, ա՜նպատկառ հրէշ, չես գիտեր թէ որո՛ւ վրայօք կը խօսիս, եթէ քսածներուդ մէկ հազարերորդն ականջն հասնի, բաւական է զքեզ կախաղան հանելու։

ԳԱՅԼԱԿ

Կախաղա՜ն...

ՇԱՒԱՐՇ

Ա՛յո, ա՛յո, զարմանալ պէտք չէ, եթէ օրիորդը իշխանին խօսք մը ըսէ բաւական է, երբ նա կը խօսի՝ իրաւունք և արդարութիւն կը լռեն։

ԳԱՅԼԱԿ

Ներեցէք պա՛րոն, եթէ անզգուշութեամբ մէկ երկու խօսք ըսի...

ՇԱՒԱՐՇ

Ո՛չ, ո՛չ, ապահով եղիր գաղտնեպահութեանս վրայ, միայն թէ այսուհետեւ կշռէ խօսքերդ և ապա արտասանէ, մի՛ ջանար տկար խելքովդ ընդհանուրին հակառակիլ. դու տիկնոջ թերութիւնները միայն կը տեսնես, բայց նորա բարեմասնութիւնները ճանչնալու դեռ անկարող ես, արդարեւ պառուած է բայց ժիտոյժ, աչները թառամած են, բայց հայեցուածքը զաչխարհ կը դողացընէ, ակռաները թափած են բայց կզակն այնչափ հաստատուն է՝ որ երկաթը կը փշրէ, ականջը չլսեր բայց յոյժ զգայուն է, այտերը դունատ և թառամած են բայց պատկառանք կ՚ազդեն, բնութեամբ նիհար և հիւանդոտ է բայց հաստատամտութեամբ ամեն դժուարութեանց կը յաղթէ. չեմ յիշեր պերճ քալուածքը, դրաւիչ ժպիտը, վայելուչ հասակը, փափուկ սիրտը, առողջ դատողութիւնը, հանճարեղ խօսքերը, անվրէպ յիշողութիւնը... և ահա ինքը կու գայ հեռացի՛ր ասկից։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՀՐԱՊՈՅՐ ԵՒ ՇՈՒՇԱՆ

ՀՐԱՊՈՅՐ

Շաւա՛ղշ, կենաց բաժակը պատրաստէ։

ՇԱՒՈՒՇ

Որո՞ւ համար, Օրի՛որդ։

ՀՐԱՊՈՅՐ

Իշխանազունին։

ՇԱՒՈՒՇ

Ի՞նչ կ'ըսէք։

ՀՐԱՊՈՅՐ

Շաւա՛ղշ, պէտք է ոտիցս առջեւ խոնարհած տեսնեմ այդ խրոխտ երիտասարդը։

ՇԱՒՈՒՇ

Անկարելի է։

ՀՐԱՊՈՅՐ

Պէտք է։

ՇԱՒՈՒՇ

Եթէ յայտնուի, կորսուած ենք։

ՀՐԱՊՈՅՐ

Կը սիրեմ զինքը։

ՇԱՒՈՒՇ

Իշխանազո՞ւնը . . .

ՀՐԱՊՈՅՐ

Այո՛, ջանայ որ յաջողիս, առանց վայրկեան մը կորսնցընելու միջոց մը գտիր։

ՇԱՒՈՒՇ

Հրամանդ պիտի կատարուի, Օրի՛որդ։

ՀՐԱՊՈՅՐ

Ըսէ՛ դռնապանին՝ որ մէ՛կը ներս չընդունի։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՀՐԱՊՈՅՐ (առանձին)

Ալ այս անգամ պիտի յաղթեմ սիրտս. որ և է մերժում մ'անկարելի է. Իշխանուհի պիտի ըլլամ, ամբողջ ժողովրդեան մը պիտի հրամայեմ, մարդիկ պիտի խոնարհին իմ առջեւ, ալ երջանկութիւնս կատարեալ պիտի ըլլայ . . .

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՀՐԱՊՈՅՐ ԵՒ ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆ (դռնելուն ծրար մը ի յեռին)

Օրի՛որդ։

ՀՐԱՊՈՅՐ

Ո՞վ խրկած է զայդ։

ՇՈՒՇԱՆ

Բերող ծառան ըսաւ թէ մէկը գրուած է։

ՀՐԱՊՈՅՐ

Պարոն Ծակիկոսի խոստացած ադամանդեայ ապարանջանն ըլլալու է, որուն վրայ անունը գրել պիտի տար։ (ԲԱՆԱԼՈՎ ԺԲՈՒԸ) Ի՞նչ կը տեսնեմ, մի միայն գիր.ք մը կայ ասոր մէջ։ (ԱՌԱՔԻՆ ԵՐԵՔ ԿԱՐԴԱԼՈՎ)

«Բորբոքեալ սրտիս այս գործ անձկալի,
Իբբր հաւատչեայ սիրոյս սոսկալի՝
Առ քեզ ընծայեմ, սիրուհիդ քաղցրիկ,
Զի սէր քոյ ծընաւ 'ի միտս իմ փափկիկ
Այն վեհ գաղափար հեղինակութեան։
Այլ աւա՜ղ։ վատակ իմ աշխատութեան
Ոչ կարաց առնել գործ քեզ արժանի։
Սակայն սիրուհիդ իմ նախանձելի,
Ներողամիտ ինձ լեցիս յաւիտեան
Այս նուիրական աղերս է քեզ իմ
Ծառայ անպիտան քոյ աշնուութեան,
Սիրոյս յաւիտեան մնամ հաւատարիմ։

Սառոռաբ Սոփեսպեան»

Կենացս մէջ այս աստիճան անհամ և անճոռնի ոտանաւոր տեսած չունէի։ Թշուառը ո՛ գիտէ, ո՛րչափ քրտինք թափած է։ Տեսնենք սա հեղինակութիւն ըսածը ինչ է։ (ԿԱՐԴԱԼՈՎ) «Նորահնար ժամանակագրութիւն ժամանակակից արկածից»։ բաւական երկար

նշանակութիւն ունենալու է այս գիր.քին անունը արտասանելու համար, տեսնենք մէջը ինչ կայ։ (ԿԱՐԴԱԼՈՎ) «Փետրուար 8, այսօր առաւօտեան ժամը ութին ելայ, օդը պարզ և ցուրտ էր, տաքնալու համար սրճարան գացի, երկու ժամ նարտով զբօսնելէն ետքը նշմարեցի թէ . . .» հահ հահ հահ։

ՇՈՒՇԱՆ

Ի՞նչ կայ տիկին, ի՞նչ է նշմարածը։

ՀՐԱՊՈՅՐ

(ԿԱՐԴԱԼՈՎ) «Նշմարեցի թէ մօրուքիս սանտրը կորուսած եմ»։ հահ։ հահ։ հահ։ . . . ինչ զարմանալի ժամանակագրութիւն, արդարեւ նորահնար, այս աստիճան մանրամասն տեղեկութիւնք բնաւ տեսնուած չեն։

ՇՈՒՇԱՆ

Խեղճ մարդը, հեղինակութեան փափաքանօք ո՛րչափ ժամանակ, ո՛րչափ թուղթ, և մելան վատնած է։ հահ։ հահ։ հահ։

ՀՐԱՊՈՅՐ

Եւ ապագային պատմութիւնը լուսաւորելու համար՝ ո՛րչափ ծախք ըրած է տպագրել տալով։

ՇՈՒՇԱՆ

Կ'երեւայ թէ այս գիր.քը բաւական խըն-

գալու առարկայ պիտի ըլլայ մեզ համար։

ՀՐԱՊՈՅՐ

Այո՛, այո՛· բայց պէտք է անմիջապէս ետ խրկես այս գիրքը։

ՇՈՒՇԱՆ

Ինչ կ'ըսէք, օրի՛որդ, թշուառ երիտասարդը յուսահատ մեռցընել կ'ուզէք։

ՀՐԱՊՈՅՐ

Ո՛չ, ո՛չ· ալ այսուհետեւ ինձ ուղղուած որ և է ընծայ մը պէտք չէ ընդունիս։

ՇՈՒՇԱՆ

Սիրելի՛ տիրուհիս, ի՛նչ է այս փոփոխութեան պատճառը։

ՀՐԱՊՈՅՐ

Շուշան, իշխանուհի պիտի ըլլամ։

ՇՈՒՇԱՆ

Ի՞նչ կ'ըսէք տիկին· բայց ի՞նչպէս։

ՀՐԱՊՈՅՐ

Իշխանազունը կը սիրեմ և քիչ օրէն պիտի ամուսնանամ։

ՇՈՒՇԱՆ

Ուրեմն իշխանին հաւանութիւնը ստացաք։

ՀՐԱՊՈՅՐ

Դեռ ոչ, բայց երբ որդին թախանձէ, անշուշտ հաւանութիւնը պիտի տայ։

ՇՈՒՇԱՆ

Օրի՛որդ, զդուշացէք իշխանազունի մը

խոստումներէն։

ՀՐԱՊՈՅՐ

Ոչ խոստացաւ և ոչ տեսաւ զիս։

ՇՈՒՇԱՆ

(Ինքն.) Այդպէս ըլլալու է, եթէ տեսած ըլլար այդչափ շուտ պիտի չխոստանար· (Բարձր) Թէպէտ և ձեր գեղեցկութեանը կը վստահիք և իրաւունք ունիք բայց և այնպէս քանի որ դեռ զձեզ տեսած չէ···

ՀՐԱՊՈՅՐ

Իրաւունք ունիս զարմանալու քանի որ դեռ տեղեակ չես թէ ինչպէս···

ՇՈՒՇԱՆ

Ըսէք տի՛կին, մի՛ ծածկէք ինձ, միթէ չորս տարիէ 'ի վեր ձեր վստահութեանը չարժանացա՞յ։

ՀՐԱՊՈՅՐ

Արդարեւ հաւատարմութեանդ վրայ կասկածելու պատճառ մը չունիմ···

ՇՈՒՇԱՆ

Ուրեմն ինչո՛ւ կը վարանիք։

ՀՐԱՊՈՅՐ

Շո՛ւշան, սիրահարացս ցուցակը քո՛վդ է։

ՇՈՒՇԱՆ

Այո՛ օրիորդ։

ՀՐԱՊՈՅՐ

Լաւ· տե՛ս քանի՞ հատ են։

ՇՈՒՇԱՆ

(դեռաբեր Նայելով) ինքնասէր և ուժ։

ՀՐԱՊՈՅՐ

(Դէպ-ի) Եթէ երկու աւելի բլլար կորսուած էի։ (Բարձր) Անշուշտ կը զարմանաս թէ ինչպէս կին մը այսչափ սիրահարներ կրնայ ունենալ։

ՇՈՒՇԱՆ

Ձեր գեղեցկութիւնը ճանչցողը բնաւ չզարմանար օրի՛որդ։

ՀՐԱՊՈՅՐ

Արդարեւ այնպէս է, բայց գիտցիր թէ առաջին մարդը զոր սիրեցի՝ անդթաբար մերժեց զիս։

ՇՈՒՇԱՆ

Միթէ կարելի՞ է։

ՀՐԱՊՈՅՐ

Այո՛, թէպէտ հիմա ալ գեղեցիկ եմ բայց այն ժամանակ աննման էի և սակայն ապերախտն անարգեց զիս. այս բանս այնչափ մեծ ցաւ պատճառեց ինձ որ ուխտեցի վրէժ առնուլ բոլոր մարդոցմէ և յաջողեցայ։

ՇՈՒՇԱՆ

Ի՞նչպէս։

ՀՐԱՊՈՅՐ

Մայրս, սիրելի մայրս մեռնելու վայրկենին զիս քովը կոչեց և «աղջիկս, ահաւասիկ իմ

քեզ թողուցած ժառանգութիւնս» ըսաւ, ինքնասէր և ինն դեղահատ տալով ինձ. «Այս դեղերէն եթէ հատ մը գինիի հետ խառնելով երիտասարդի մը խմցուներս, ալ նորա բախտը քու ձեռքդ է, վասն զի այդ դեղերն գինիին այնպիսի կաղդուրիչ զօրութիւն մը կու տան որ զայն խմողն առաջին կինը որ տեսնէ պիտի սիրահարի. ջանա՛ վրէժդ լուծել»։

ՇՈՒՇԱՆ

Ուրեմն այդ դեղերով է որ...

ՀՐԱՊՈՅՐ

Այո՛, այս դեղերով՝ որ մայրս իւր ձեռօք պատրաստած էր ինձ համար, վրէժս լուծեցի. այն ամեն յանդուգն երիտասարդները՝ որ համարձակած էին արհամարհել զիս, երբ կենաց բաժակը խմեցին լաւ ճանչցան իմ արժանիքս, խոնարհեցան ոտիցս առջեւ և թողութիւն խնդրեցին։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՆՈՑՆՔ, ԵՏՔԸ ԳԱՅԼԱԿ ԵՒ ԶՈՐՍ ՍԻՐԱՀԱՐՔ

ԳԱՅԼԱԿ

(Դրուն) Չէ՛, հոս սպասել չբլլար։

ՁԱՅՆ ՄԸ

(ԴՐՈՒՆ) Պէտք է օրիորդը տեսնեմ։

ԳԱՅԼԱԿ

(ԴՐՈՒՆ) Պարոնա՛յք, օրիորդը հոս չէ, քաղաքավարութեամբ դուրս կ՚ելնէ՞ք։

ՈՒՐԻՇ ՁԱՅՆ ՄԸ

(ԴՐՈՒՆ) Մինչեւ որ օրիորդը դայ՝ անկարելի է ինձ դուրս ելնել։

ԳԱՅԼԱԿ

(ԴՐՈՒՆ) Է՛հ, պա՛րոն ո՞ւր կ՚երթաք։

Ա. ՍԻՐԱՀԱՐ

(Ներս մտնելով) Սա դռնապանին լրբութիւնը օր մը համբերութիւնս պիտի հատցընէ։

ԳԱՅԼԱԿ

(Ներս մտնելով) Պարոնա՛յք, կամաւ և պարկեշտութեամբ դուրս պիտի ելնե՞ք, ապա թէ ոչ։ . . .

(Երեք-չորսն ալ Ներս կը մտնեն)

Բ. ՍԻՐԱՀԱՐ

Ոչ, չեմ ելներ, ի՞նչ ըսել կուզես, ո՛վ կարծեցիր զիս (Նշանելով դէպ ի դուռ) Ա՛հ օրի՛որդ դուք հո՛ս էք եղեր։

ՀՐԱՊՈՅՐ

Պարոնա՛յք, ինչ աղմուկ է այդ տանս մէջ։

Ա. ՍԻՐԱՀԱՐ

Ո՛վ իմ սրտիս հատորը, աչացս լոյսը, կամացս թագուհին, սիրոյս տաճարը, ձեր

դռնապանը կը յանդգնի ծածկել ինէ կենացս ճառագայթը, մոռածութեանցս առարկան, երեւակա . . .

ՀՐԱՊՈՅՐ

Բաւական է, բաւական, ալ լրբութիւնը վերջին ծայրը հասուցի՛ք։

Բ. ՍԻՐԱՀԱՐ

Սիրուն հրեշտակս, ինչո՞ւ այդպէս կը խոժոռեցընես այդ չքնաղ դէմքն (ՈՐՔԸ ԷՆՈՒԸՔ) ջախջախէ գլուխս ոտիցդ տակ, բայց . . .

ՀՐԱՊՈՅՐ

Գա՛յլակ, այս պարոնները պէտք է դուրս հանել։

(Կը դիմեն Շուշանի հետ.)

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԳԱՅԼԱԿ ԵՒ ՁՈՐՍ ՍԻՐԱՀԱՐՔ

ԳԱՅԼԱԿ

Է՛, պարոնայ.ք, դասերնիդ առի՛ք՝ ալ ամենայն հլութեամբ և պարկեշտութեամբ դուրս կ՚ելնէ.ք։

Բ. ՍԻՐԱՀԱՐ

Անգութ, անօրէն կին, ինձ նման մարդ մը խոնարհի ծնգացդ առջեւ, պաղատի և դու մերժես. մեկ մ՚ալ այս տանը սեամէն պիտի չանցնիմ։ (Կը դիմեն)

7/XI-1922

Ա· ՍԻՐԱՀԱՐ

(Դէպ-ոյ) Ես գիտեմ՝ այս կերպ ընդունելութեան պատճառը միւսներն են, վախնալով որ նոցա նախանձն ու ատելութիւնը կը գրգռէ՝ չուզեց ինձ յայտնել իւր սէրը։ Երթամ և ժամէ մը մինակ դառնամ, այն ժամանակ ուղածիս չափ կրնամ տեսնուիլ։ (կը դնէ·)

Գ· ՍԻՐԱՀԱՐ

Կեղծեց, չուզեր որ զիս սիրելն ուրիշները իմանալով հակառակութիւն մը ծագի։ Ուրիշ անգամ մարդ չեղած ժամանակ պիտի գամ։ (կը դնէ·)

ԳԱՅԼԱԿ

Է՛, պարոն, դուք դեռ հոս է՛ք։

Դ· ՍԻՐԱՀԱՐ

Մինչեւ որ տիկնոջ հետ չտեսնուիմ՝ անհնար է ինձ ասկից երթալ։

ԳԱՅԼԱԿ

Պա՛րոն· տիկինը ձեր հետ պէտք եղած կերպով տեսնուեցաւ, եթէ գոհ չեղաք, ես ալ հիմա դաւաղանովս պիտի տեսնուիմ։

Դ· ՍԻՐԱՀԱՐ

Ի՞նչ ըսել կ՚ուզես։

ԳԱՅԼԱԿ

Կարծեմ խօսքերս բացատրութեան պէտք չունին։

Դ· ՍԻՐԱՀԱՐ

Ինձ նման աղնուականի մը ձեռք վերցընե՛լ։

ԳԱՅԼԱԿ

Պարոն, դուք ձեր աղնուականութեամբն հանդերձ ծեծը կ՚ուտէք, փութացէք խոհեմութեամբ դուրս ելնել։

Դ· ՍԻՐԱՀԱՐ

Զգուշացիր, ապա թէ ոչ···

ԳԱՅԼԱԿ

Պարոն, երկար խօսք պէտք չէ, դուրս պիտի ելնէք։

Դ· ՍԻՐԱՀԱՐ

Ո՛չ։

ԳԱՅԼԱԿ

Լաւ ուրեմն։ (Ծեծելով դուրս կը վանէ·)

Դ· ՍԻՐԱՀԱՐ

(դրսէն) Ա՜Հ···Ա՜Հ···

ՏԵՍԱՐԱՆ Ը·

ՇՈՒՇԱՆ (առանձին)

Վերջապէս յաջողեցայ սա դեղերէն հատ մը գտնել, շուտ բաժակ մը պատրաստեմ և

Շաւարշին խմցընեմ, տեսնեն.ք այսուհետեւ իմ նշանացի ակնարկութիւններս չտեսնել պիտի կեղծէ՞, եթէ ոչ բարակի մը նման հետքս պիտի փնտռէ. բայց ես ալ այսուհետեւ թէ և աղաչէ, պաղատի, չլսել պիտի կեղծեմ. . . : Ոտքի ձայն մը կը լսեմ, անշուշտ ինքն է, թերեւս բաժակը ձեռքս տեսնելով կասկածի . . . մէկ կողմ քաշուիմ:

(Բաժակը կը թողու և կը դնի.)

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԳԱՅԼԱԿ (ՈՒՆԻՔ)

Սա աներեւներէն քաշածս, ոչ գիշերը քուն և ոչ ցերեկը հանգիստ ունին. ամեն ժամ, ամեն վայրկեան գլուխս կը ցաւցընեն. անպիտանները կարծես թէ հոտ կ'առնեն. հաղիւ թէ օրիորդը կառքով տեղ մը, զբօսավայր մը կ'երթայ, մէկ մ'ալ կը տեսնես յիսուն կառք օրիորդին կը հետեւին, եթէ թատրոն երթայ՝ դիմացի օթեակներուն մէջ դիտակ 'ի ձեռին շարուած են, եթէ պարահանդէս երթայ այնչափ պարելու կը հրաւիրեն որ վայրկեան մը հանդիստ չեն թողուր, պատուհանն անդամ ելնէ՝ մեր անշուք փողոցին մէջ անցուդարձին վերջը չդար. իսկ օրիորդին ուղղուած տոմսակներն անթիւ են, առաւօտ, երեկոյ, կէս գիշերուն անդամ յանկարծ դուռը կը բախուի. ձեռքդ գործ մը ունիս, կերակուր կ'ուտես, կը քնանաս, պէտք է ելնել. դուռը կը բանաս՝ մէկ մ'ալ ինչ կը տեսնես, «Սա տոմսակը յոյժ սոփպողական է, օրիորդին յանձնեցէք.»· սոփպողական ըսածն ալ սիրահարաց մէկը գիշերը չէ կրցեր քնանալ, չորս ժամ մոռածելէն ետքը երկու տող անճոռնի ոտանաւոր միտքն եկած է և առանց մաներկրորդ մը կորսնցուցնելու գրած և կէս գիշերուն օրիորդին խրկած է. ես ալ կարծելով թէ նամակին մէջ կարևոր լուրեր կան, վեր կ'ելնեմ, օրիորդը կ'արթնցունեմ, տոմսակը իրեն կը յանձնեմ նա ալ այսպիսի չնչին բանի մը համար զինքը արթնցունելուս համար կը բարկանայ՝ յանցաւորն ես կ'ըլլամ և իբր վարձատրութիւն ծառայութեանս՝ պատուական ծեծ մը կ'ընդունիմ. չիտակն ուր որ ալ ըլլամ, երբ ալ ըլլայ բախտս բաց է. քանի կը ջանամ հաւատարմութեամբ ծառայել՝ այնչափ կշտամբանք և յանդիմանութիւն կը

լսեմ, ախ ես շատոնց այս պաշտօնէն հրաժարած էի բայց հօրեղբայրս թող չտար։ Ծառայութիւն չէ այս, փորձանք։ (Քաժակը նշմարելով) ոհ գոնէ սա գաւաթը պարպեմ և յոգնութիւնս առնեմ (կը խմէ)։ ոհ ինչ գեղեցիկ բան է գինին, կարծես թէ նոր զօրութիւն մը կ'զգամ։ ։ ։

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ՀՐԱՊՈՑՐ ԵՒ ԳԱՅԼԱԿ

ՀՐԱՊՈՑՐ

(Շտապով) Գայլակ, շուտ ճամբայ ել, գնայ գտիր Շաւարշը։

ԳԱՅԼԱԿ

Ով իմ թագուհիս, քու հրամաններդ կատարելու համար արժիւին թեւերն պիտի փոխ առնում և թռիմ. ինձ համար քեզ ծառայելը՝ միլիոնաւոր ժողովրդեան հրամայելէ քաղցր է։ ։ ։

ՀՐԱՊՈՑՐ

(Ընհամքերութեամբ) բաւական է, վազէ հրամանս կատարելու։ (Դէպ ի ի) Կոչտ մարդ՝ կը կարծէ թէ քանի մը խօսք սորվելով՝ կրնայ ինձ հաճելի թուիլ։

ԳԱՅԼԱԿ

Ոհ, մի՛ զայրանար, իմ թագուհիս, եթէ անպատշաճ խօսք մը արտասանեցի անդիտութեամբ, թողութիւն կը խնդրեմ, եթէ։ ։ ։

ՀՐԱՊՈՑՐ

(Սաստիկ) Երկար խօսք պէտք չէ, փութաց ըսածս կատարել, անբան կենդանի։

ԳԱՅԼԱԿ

Ոհ իմ թագուհիս, ինչո՛ւ այդպէս սաստիկ կը խոցես սիրտս, միթէ չե՞ս դիտեր թէ քեզ, քեզ միայն ծառայելու համար կ'ապրիմ, թէ քեզ նուիրած եմ բովանդակ անձս, թէ դիշեր ցորեկ միայն։ ։ ։

ՀՐԱՊՈՑՐ

(Սաստիկ) Լռէ, անարգ անասուն, շուտ գնայ, եթէ բարկութիւնս գրգռել չես ուզեր։

ԳԱՅԼԱԿ

Աւա՜ղ, փոխանակ արգահատելու կը զայրանաք։

ՀՐԱՊՈՑՐ

(Մեկնութ) Հիմա սա աթոռները գալ-խուն պիտի իջեցնեմ։ (Բարձր) Դեռ պիտի խօսի՞ս։

ԳԱՅԼԱԿ

Խօսք մը՝ եթէ կը հաճիս, բառ մը՝ եթէ կը ներես։

ՀՐԱՊՈՅՐ

(Խոժոռ) Ո՛չ։

ԳԱՅԼԱԿ

Սակայն կ՚աղաչեմ օրիորդ։

ՀՐԱՊՈՅՐ

Դեռ հո՞ս ես։

ԳԱՅԼԱԿ

Թո՛ղ օրիորդ, թո՛ղ արտասանեմ խօսք մը որ ինձ համար կենաց և մահու խնդիր մ՚է։

ՀՐԱՊՈՅՐ

Շուտ ըսէ, ինչ է խօսքդ։

ԳԱՅԼԱԿ

Կը սիրեմ զքեզ։

ՀՐԱՊՈՅՐ

(Կոպտութեամբ) Ալ բաւական է, կորիր առջևէս, դուրս ել տունէս և մէկ մ՚ալ չտեսնեմ։

ԳԱՅԼԱԿ

(Ծունր դնելով) Սակայն կը սիրեմ զքեզ։

ՀՐԱՊՈՅՐ

(Կոպտութեամբ) Անպատկառ շուն, դեռ կը համարձակի՞ս կրկնել այդ խօսքը։

ԳԱՅԼԱԿ

Օրիորդ, ճաճանչափայլ դէմքդ հոգիս կը լուսաւորէ, ձիւնափայլ ձեռներդ սիրտս կը հրապուրեն, ոսկեթել մազերդ միտքս կը յափշտակեն, իսկ նսեմաստուեր աչուքներդ հոգիս, սիրտս, միտքս, ամբողջ մարմինս սիրոյ տագնապալի ալէկոծութեանց մէջ կը թաւալեն, 'ի զուր կը ջանամ զերծանիլ . . .

ՀՐԱՊՈՅՐ

Վերջապէս պիտի հեռանա՞ս։

ԳԱՅԼԱԿ

Ո՛ արարածոց չքնաղագոյնը, բնութեան պարծանքը, եթէ դիտայիր ինչ հուր, ինչ բնազանցական յանկուցում մը կ՚զդամ զքեզ տեսնելով, հոգւոյս միակ կայծն, կամայս միակ տիրուհին . . .

ՀՐԱՊՈՅՐ

Դեռ կ՚ընդդիմանա՞ս։

ԳԱՅԼԱԿ

Ոհ մի՛ բարկանար տիրուհիս, ահա կ՚երթամ։ (Գոյլակ կը դնէ)

ՏԵՍԱՐԱՆ ԺԱ·

ՀՐԱՊՈՑՐ ԵՒ ԵՏՔԸ ՇԱՒԱՐՇ

ՀՐԱՊՈՑՐ

(Նոթելով) Այս ասպիճանի լրբութիւն բնաւ տեսնուած չէ. ծառայ մը այսչափ ընդդիմանայ . . .

ՇԱՒԱՐՇ

(Նոյն դիտելով) Օրիորդ ամեն բան կարդադրեցի, յուսով եմ որ իշխանաղջունը վաղը քուկդ պիտի ըլլայ։

ՀՐԱՊՈՑՐ

(Խիստ-ցեմբ) Ինչ կ'ըսես, Շաւարշ։

ՇԱՒԱՐՇ

Ուղղակի իշխանին պալատը գացի և իմացայ թէ իշխանաղջունը հիւանդ է։

ՀՐԱՊՈՑՐ

Աստուած իմ . . . բայց ես երէկ կառքին մէջ տեսայ։

ՇԱՒԱՐՇ

Հիւանդութիւնը երևակայական է, հետևաբար մեզ օգտակար կրնայ ըլլալ։

ՀՐԱՊՈՑՐ

Բայց բաժակն ո՛վ պիտի ներկայացնէ։

ՇԱՒԱՐՇ

Իշխանաղջունին դաստիարակն իմ վաղեմի բարեկամներէս մէկն է, և երբ որ ուզէք կրնայ զձեզ ներկայացնել։

ՀՐԱՊՈՑՐ

Ուրեմն շուտ ճամբայ ելնենք, պէտք եղածը պատրաստէ։

(Լուռ դադար կ'ելնէ)

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՎԵՐԻԿԱԿՈՍ ԵՒ ՍՈՒՐԱԿ

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Սուրակ, կատարեցէ՛ք հրամանները։

ՍՈՒՐԱԿ

Այո, վեհափառ տէր։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Քանի՛ իմաստուն գտար։

ՍՈՒՐԱԿ

Վեց հատ, վեհափառ տէր։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Ամենն այդչա՞փ։

ՍՈՒՐԱԿ

Տէր իմ, անթիւ են իմաստունները, բայց ես իմաստնագոյնները միայն հաւաքեցի։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Որո՞նք են այդ վեց անձինքը։

ՍՈՒՐԱԿ

Թափուր փիլիսոփայն, Բշուր բժիշկը,

Կանցուղ վաճառականը, Նենդուստ արհեստաւորը, Արբկեր գործաւորը և Համբեր երկրագործը։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Ո՞ւր են այդ անձինքը։

ՍՈՒՐԱԿ

Դուրսը ձեր վեհափառութեան հրամանին կ'սպասեն։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Գումարուի ժողովը, և բացուի առեանը։

(Կը մեկնի հանդերձ ընկնապահօք)

ՍՈՒՐԱԿ

(Պալատականէ մը) Ներս հրաւիրէ յանձնաժողովոյ անդամները։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՍՈՒՐԱԿ, ԹԱՓՈՒՐ, ԲՇՈՒՐ, ԿԱՆՑՈՒՂ, ՆԵՆԴՈՒՍՏ, ԱՐԲԿԵՐ ԵՒ ՀԱՄԲԵՐ

ՍՈՒՐԱԿ

(Ադեանը քանալով) Հրամանաւ մեծի վեհիկակոսի իշխանին բովանդակ Պոլսոյ այսօր ժողովեցի զձեզ իշխանազունին ցաւալի վիճակին վերայ խորհուրդ հարցնելու

կամ լաւ ևս ըսելով ըստ օրինի նորա առողջութիւնը կարգադրելու համար, ինչպէս որ հանրածանօթ է օրինասիրութեան նորին վերհսկաւորութեան որ լաւագոյն համարի օրինաւորապէս դարմանելով մեռցընել որդին քան թէ ապօրինաւոր կերպով բժշկաց դիմել և առողջացընել։ Իշխանաղունին հիւանդութիւնը ոչ թէ նիւթական այլ բարոյական է. որ դաղափարաց խանդարումէն և երևակայութեան շփոթութենէն յառաջ եկած ըլլալով, կանխաւ կ'իմացնեմ թէ նիւթական դեղերն ոչ միայն անգործադրելի պիտի մնան, այլ և օգուտ պիտի չընեն։ Արդ պարոնայք, ձեր հանրածանօթ իմաստութեանը կը դիմեմ այս դժնդակ հիւանդութեան դարման մը գտնելու համար, ուստի պէտք է որ իւրաքանչիւրն 'ի ձէնջ իւր կարծիքը յայտնէ։

ԹԱՓՈՒՐ

Բարոյական հիւանդութեանց նիւթական դեղ չըլլար ըսիք որ սխալ դատողութիւն մ'է, չգործադրուած դեղերէն օգուտ մը սպասեցիք որ առողջ դատողութեան գործ չէ, մեզ դիմելով օրինաւորապէս իշխանաղունը բժշկել կարծեցիք որ սխալ հանդուրմ մ'է։

ՍՈՒՐԱԿ

Շնորհակալ եմ ձեր քննադատութիւններէն որ ձեր հաղուագիւտ իմաստութեանը փորձը կանխաւ մեզ յայտնելու նպատակաւ են, սակայն խնդրէն չեղլ . . .

ԹԱՓՈՒՐ

Ո՛չ, պարոն նախագահ, չարաչար կը մեղանչէք իմ դիտողութեանցս սխալ մեկնութիւններ տալով. այդպիսի անճոռնի մտապարծութիւններ մտքէս անգամ անցած չեն։

ՆԵՆԳՈՒՍՏ

Այո՛, իրաւունք ունի պարոն Թափուր, կը բողոքեմ նախագահին սխալ մեկնութեանց դէմ։

ԿԱՆՑՈՒՂ

Ոչ, բնաւ իրաւունք չունիք բողոքելու։

ԱՐԲԿԵՐ

Պարոն նախագահ, օրինաց 28 երորդ յօդուածին կը հակառակիք առանց ժողովականաց կամքն հասկնալու վիճաբանութեան սկսելով. ձեր պարտքն էր ժողովոյս

գումարման պատճառն յայտնելէն ետքը ժողովականաց հաւանութիւնը ստանալ, փոխանակ վիճաբանութեան սկսելու. երբ օրէնքը կը բռնաբարուի ես չեմ կրնար հանդուրժել։

ՆԵՆԳՈՒՍ

Այո, նախ պէտք է քուէով որոշուի թէ վիճաբանութեան սկսել հարկ է թէ ոչ։

ՀԱՄԲԵՐ

Պարոն նախագահն առանց ժողովականաց որոշման ժողով գումարելով անհատական իրաւանց դէմ կը գործէ։

ԹԱՓՈՒՐ

Պարոնայք, չարաչար կը մեղանչէք կարծելով թէ վիճաբանութեան սկսած ենք. ես պարզապէս պարոն նախագահին խօսքերը հասկանալի ընելու համար քանի մը դիտողութիւններ ըրի, թերևս նախագահին ծանր թուին, բայց ես ընդհանուրին օգուտը միայն կը մտածեմ. իսկ երբ սըխալ մեկնութիւններ տեղի կ'ունենան իմ բողոքելս բնական է։

ՆԵՆԳՈՒՍ

Արդարեւ իրաւունք ունի պարոն Թափուր բողոքելու։

ՀԱՄԲԵՐ

Այո, ճնշում կը բանեցնէ պարոն նախագահը։

ԱՐԲԿԵՐ

Գաղափարաց ազատութիւնը կը բռնաբարուի։

ԲՇՈՒՐ

Պարոնայք, բժշկական իրաւանց դէմ կը գործէք։

ԱՆՅՈՒՂ

Քուէ կ'ուզենք, քուէի դրուի։

ՀԱՄԲԵՐ

Ոչ, նախ խնդիրը լուսաբանելու է։

ԹԱՓՈՒՐ

Կը բողոքեմ. պարոն նախագահին դէմ որ իմ ժողովական իրաւունքս կը բռնաբարէ։

ՆԵՆԳՈՒՍ

Այո, ճնշում կը բանեցնէ։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆՈՅՆՔ ՎԵՀՈՒՆԱԿ ԵՒ ԲԱԲԻԿ

ՎԵՀՈՒՆԱԿ

(Ներս մտնելով) Ինչ աղմուկ է այս, պարոնայք, հոս ոչ գինետուն է և ոչ յիմա-

բանոց՝ դուրս կորսուեցէք ամենքդ ալ։ (Վէց ժողովական դուրս կ'ելնեն)։ Սուրակ, ինչո՞ւ է այս խենդերը հոս ժողվեր ես։

ՍՈՒՐԱԿ

Ի՞նչ կ'ըսէք, տէր իմ, քաղաքին հրուչակաւոր իմաստուններն են։

ՎԵՀՈՒՆԱԿ

Ուրեմն . . . վայ քեզ Պօլոնեա։

ԲԱԲԻԿ

Մի՛ ցաւիք, տէր իմ, ամեն բան իւր եղանակն ունի, այս ալ խենդերունն է։

ՎԵՀՈՒՆԱԿ

Եւ ապրելու է, խենդերու հրամայելու համար։

ԲԱԲԻԿ

Ի՞նչ պէտք ունիք մեռնելու տէր իմ, ինչո՞ւ այդպէս կ'աճապարէք, եթէ ձեզ նման իշխանազուն մը այսպէս ըսէ, ես ինքզինքս ծովը նետելու եմ։

ՎԵՀՈՒՆԱԿ

Անտարակոյս, ի՞նչու կ'սպասես։

ԲԱԲԻԿ

Ձեր հրամանին։

ՎԵՀՈՒՆԱԿ

Այդ մասին ապահով եղիր, ամեն վայրկեան աղատ ես ուզածիդ չափ խեղդուելու։

ԲԱԲԻԿ

(Դէպ՝ ի) Ի՞նչ մարդասէր առաջարկութիւն։

ՎԵՀՈՒՆԱԿ

Ի՞նչ կը մտմտաս, միթէ խօսքերս զարմանք կը պատճառեն քեզ, ըսէ ինձ, աշխարհ եկար և ի՞նչ ըրիր։

ԲԱԲԻԿ

Կերայ, խմեցի և զուարճացայ։

ՎԵՀՈՒՆԱԿ

Եւ ի՞նչ է այդ զուարճութիւն կոչածդ։

ԲԱԲԻԿ

Գեղեցիկ զբօսավայր մը, դալար մարգագետիններ, աւազաններ, կարկաչահոս ջրեր . . .

ՎԵՀՈՒՆԱԿ

Ամեն զբօսավայրերը շրջեցայ և այնչափ տաղտկութիւն պատճառեցին ինձ որ անկարելի եղաւ, երկու անգամ տեղ մը երթալ։

ԲԱԲԻԿ

Ամեն տեսակ համագամ կերակուրներ, առատ գինի, զանազան ըմպելիք, տեսակ տեսակ պտուղներով և ծաղիկներով զարդարեալ ճոխ սեղան մը . . .

ՎԵՀՈՒՆԱԿ

Այդ ամենուն անուններն անգամ զբաղուանք կը պատճառեն ինձ։

ԲԱԲԻԿ

Ամեն տեսակ նուագարաններէ բաղկացեալ հեշտալի երաժշտութիւն մը . . .։

ՎԵՀՈՒՆԱԿ

Զկայ ձայն մը որ դլխուս ցաւ չպատճառէ։

ԲԱԲԻԿ

Աշնան պայծառ գիշերները, սրնթաց մակոյկներով ձուկ որսալու, ցերեկները գեղեցիկ նժոյգներու վերայ հեծած բազմաթիւ շուներով որսի երթալ . . .

ՎԵՀՈՒՆԱԿ

Զանձրոյթ և յոգնութիւն։

ԲԱԲԻԿ

Գեղեցիկ օդով ճանապարհորդել, օտար երկիրներ, նոր բնակիչներ տեսնել . . .

ՎԵՀՈՒՆԱԿ

Ո՛ւր որ դացի զբաղանքս աւելցան։

ԲԱԲԻԿ

Լարախաղաց և ձեռնածուաց ներկայացմանց, ծիծաղաշարժ կատակերգութեանց հանդիսատես ըլլալ . . .

ՎԵՀՈՒՆԱԿ

Մնոտի տեսարաններ որ փոխանակ զբաղարճութեան զայրոյթ կը պատճառեն։

ԲԱԲԻԿ

Վերջապէս, գեղեցիկ օրիորդաց հետ խաղալ, պարել . . .

ՎԵՀՈՒՆԱԿ

Լռէ, կանանց անունը լսեմ կը դարշիմ։

ԲԱԲԻԿ

Ծառայ եմ վեհափառութեանդ. շատ մարդիկ տեսայ, բայց ոչ ոք ձեզ նման անզգայ։

ՎԵՀՈՒՆԱԿ

Կենացս մէջ, անգամ մը, անգամ մը միայն զուարճութիւն զգացի։

ԲԱԲԻԿ

Ե՛րբ տէր իմ, հրաշք մ՚է։

ՎԵՀՈՒՆԱԿ

Երբ իմացայ թէ՝ մէկ օրուան մէջ ժանտախտէն հազար հինգ հարիւր քաղաքացի մեռած են։

ԲԱԲԻԿ

(Դէ՜՜ է) Երանի այն ժողովրդեան որ այսչափ դթասիրտ իշխան մը ունի։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՆՈՑՆՔ ԵՒ ԱՄԲԱՐՏԱԿ

ՎԵՀՈՒՆԱԿ

Ի՞նչ լուր, Ամբարտակ, դարձեալ զուարթ ես։

ԱՄԲԱՐՏԱԿ

Ո՛վ իմ սիրելի Եշխանիկս, նոր գիւտ մը, նոր ըմպելիք մը որոյ մէկ բաժակը միայն մարդուս նեղութիւնները կը դադրեցնէ, մարմնոյն ջերմութիւն և մտացը զուարթութիւն կու տայ, շնչառութիւնը կը դիւրացնէ, արեան շրջանը կը կանոնաւորէ, դէնդերքը կը զօրացնէ, երեւակայութիւնը կը բարձրացնէ . . .

ՎԵՀՈՒՆԱԿ

(ընդհնչելով) Ի՞նչ ըմպելիք է այդ որ այդչափ կը գովես։

ԲԱԲԻԿ

(դեռ-ոռ) Այնչափ գովեց որ իմ ալ ախորժակս բացուեցաւ։

ԱՄԲԱՐՏԱԿ

(կ'երթայ և բաժակ 'ի յեռին դնելով) Ահաւասիկ տեր իմ, բաժակ մը որ մարդուս նոր կեանք կու տայ, անցելոյն դառնութիւն-

ները կը մոռցնէ և ապագայն յուսով կը քաջալերէ։

ՎԵՀՈՒՆԱԿ

(խմելեն ետքը) Արդարեւ ջերմութիւն մը կ'զգամ, ազատ շունչ կ'առնեմ, ինչ է այս ըմպելիքին անունը։

ԱՄԲԱՐՏԱԿ

Այս դերբնական հեղուկը, կենաց բաժինն և զայն հնարողը կին մ'է, տեր իմ։

ՎԵՀՈՒՆԱԿ

Կի՞ն մը. և ո՛վ է այդ կինը։

ԱՄԲԱՐՏԱԿ

Ահաւասիկ, նոյն ինքն օրիորդն է։

(Հրապարակ ցոյցնելով ոչ այն դիրքին ներս կը մտնէ)

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՎԵՀՈՒՆԱԿ, ԲԱԲԻԿ, ԱՄԲԱՐՏԱԿ ՍՈՒՐԱԿ ԵՒ ՀՐԱՊՈՑՐ

ՎԵՀՈՒՆԱԿ

(դեռ-ոռ) Ո՛վ է՝ այս կինը, քանի կը դիտեմ զինքը սիրտս կը բաբախէ, գեղեցկութիւնը համակրութիւնս կ'աւելցնէ։

ՀՐԱՊՈՑՐ

(կոպիտելով) Ձեր մեծութեան փոքրիկ ծառայութիւն մը ընելու համար էր որ այդ

հեղուկը պատրաստեցի, արդ զայն չմերժելով, զիս վարձատրած է.ք և շնորհակալութիւնս յայտնելով թողութիւն կը խնդրեմ . . .

(ԴԷՆԷԼ ԿԷՅԵ-ՅՆԵ)

ՎԵՀՈՒՆԱԿ

Կեցիր, կեցիր օրիորդ, մի՛ մեկնիր այդչափ շուտ։

ՀՐԱՊՈՅՐ

Սակայն տէր իմ. . .

ՎԵՀՈՒՆԱԿ

Օրի՛որդ, քեզ տեսնելէս 'ի վեր նոր բան մը կ'զգամ։ կարծես նոր կեանք մը կ'սկսի ինձ համար . . , նո՛ր երազներ կը պաշարեն զիս . . նո՛ր բան մը, նոր զօրութիւն մը կը քաջալերէ զիս . . . վերջապէս ինչ ըսեմ, ինչպէս բացատրեմ, նոր զգացում մը կը խըռովէ զիս . . . զարմանալի յաւիտակութիւն մը, սէր մը . . . այո՛, այո սէր մը . . . կը սիրեմ, կը սիրեմ զքեզ։

ՀՐԱՊՈՅՐ

(Դկ-ե) Վերջապէս այս խրոխտ իշխանաղունը խոնարհեցուցի։

ՎԵՀՈՒՆԱԿ

Ո՛հ, ըսէ օրիորդ. դու ալ նոյն զգացման ենթակայ չես, դու ալ մասնաւոր հա-

մակրութիւն մը չե՞ս զգար ինձ համար, կ'ազաչեմ, յայտնէ սիրտդ անկեղծաբար. ճանչնամ ճակատագիրս։

ՀՐԱՊՈՅՐ

Վեհազն տէր, դժուարին են պահանջմունքդ (ԴԷՆԷԼ ՅԵ-ՅՆԵԼԷ) թողէ.ք զիս, տէր իմ . . .

ՎԵՀՈՒՆԱԿ

Կեցիր օրիորդ, այդչափ շուտով մի՛ զըրկեր ինէ չքնաղ դէմքդ՝ զոր տեսած վայրկենիս կարծես թէ կայծ մը թռաւ այն քոյ կախարդիչ աչուքներէն և սրտիս մէջ բըռընկցուց կրակ մը՝ որ կը տոչորէ բոլոր մարմինս։

ՀՐԱՊՈՅՐ

Ոչ, տէր իմ, յուզուելու առիթ մը չըկայ, թողութիւն կը խնդրեմ . . .

ՎԵՀՈՒՆԱԿ

Կեցիր օրիորդ, վայրկեան մը շնորհէ ինձ, ո՜հ, երբ զքեզ չեմ տեսներ՝ աշխարհ կը մթագնի ինձ համար. օն դթա օրիորդ, մթութեան մէջ մի՛ թողուր զիս։

ՀՐԱՊՈՅՐ

Ո՜հ թողէ.ք տէր իմ, երթամ։ ձեր այդ խօսքերը դառն ազդեցութիւն մը կ'ընեն ինձ։

ՎԵՀՈՒՆԱԿ

Գոնէ յուսոյ նշոյլ մը թո՛ղ ինձ՝ մեկնելէ առաջ, արտասանէ բառ մը ուստի կախեալ է ապագայս, ըսէ ինձ միայն « կը սիրեմ »

ՀՐԱՊՈՅՐ

(Դեկո՜ւէ) Ինչ ըսեմ . . . եթէ յայտնեմ սիրոս . . . բայց ոչ, ոչ, սէրը սաստկացընելու համար պէտք է դժուարութիւններ յարուցանել։

ՎԵՀՈՒՆԱԿ

Օ՜ն օրիորդ, վճռէ, կեանք կամ մահ։

ՀՐԱՊՈՅՐ

Ձեմ կրնար։

ՎԵՀՈՒՆԱԿ

Ուրեմն կը սիրես զիս։

ՀՐԱՊՈՅՐ

Ո՜հ տէր իմ, ձեր հարցումները կը խըռովեն զիս թողէք, թողէք երթամ։ (Կը Դէնէ շոպո՜)

ՎԵՀՈՒՆԱԿ

Ո՜հ կեցիր. կեցիր։ (Կը Դէնէ շոպո՜ Ա՜ Բարդակ է՜՝)

ՍՈՒՐԱԿ

Ես այս գործէն բան մը չհասկցայ։

ԲԱԲԻԿ

Իշխանաղու

որ կ՚ատէր համայն մարդ-

կութիւնը, խոնարհի կնոջ մը առջեւ և այդպիսի տգեղ և անճոռնի կնոջ մը . . .

ՍՈՒՐԱԿ

Ինչ կը տեսնեմ, իշխանը։ (Դեկո՜ւէ) Ինչ ըսելու է յանձնաժողովին վրայօք։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՎԵՐԻԿԱԿՈՍ, ՍՈՒՐԱԿ, ԲԱԲԻԿ ԵՒ ԹԻԿՆԱՊԱՀԲ

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Սուրա՛կ։

ՍՈՒՐԱԿ

Վեհափա՛ռ տէր։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Ի՛նչ որոշեց ժողովը։

ՍՈՒՐԱԿ

Ա՛հ, վեհափառ տէր, հաղիւ թէ այդ պատկառելի խմաստունները հաւաքուեցան և որոշում մը պիտի տային մէկ մ՚ալ . . .

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Ի՛նչ։

ՍՈՒՐԱԿ

Աւա՛ղ։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

(անհամբերութեամբ) Ի՞նչ կայ։

ՍՈՒՐԱԿ

Իշխանաղու

՝ . . .

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Ի՞նչ կայ, վտա՞նգ մը պատահեցաւ։

ՍՈՒՐԱԿ

Ժողովականները վռնտեց։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Ի՞նչ կ՚ըսես, շուտ. կանչեցէք վեհուանակը (տանի մը անձինք կը դիմին) օրէնքը բռնաբարել. . . իմ հրաւիրած անձինքս վռնտել։

ՍՈՒՐԱԿ

Մի զայրանաք տէր իմ, հիւանդութեան հետեւանքն է . . .

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Ոչ, ոչ, ես բացառութիւն չեմ ճանչնար։

ՍՈՒՐԱԿ

Աւաղ, ինք իւր գերեզմանը կը փորէ, եթէ թողուր որ այն մեծահանճար մարդիկ դարման մը խորհէին։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Եթէ որոշում մը չորոշեցաւ, հարկաւ առաջարկութիւններ եղան։

ՍՈՒՐԱԿ

Ո՛հ տէր իմ, վիճաբանութեան տաքցած միջոցին յանկարծ իշխանաղուն վրայ հասաւ և առաջարկութեանց ժամանակ չմնաց։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Ինչ կ՚ըսես Սուրակ, առաջարկութիւն չեղած ինչպէս վիճաբանութիւն կ՚ըլլայ։

ՍՈՒՐԱԿ

Բայց վեհափառ տէր, ձեր այդ քսածն ամենուն համար չէ, իմաստուն մարդիկ առաջ կը վիճաբանեն և ետքը կ՚առաջարկեն։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Ուրեմն մարդարէական ոգի ունին որ ըլլալիք առաջարկութիւնը կանխաւ կ՚իմանան։

ՍՈՒՐԱԿ

Անտարակոյս։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Լաւ, լաւ, ուրեմն ինչ բանի վերայ կը վիճաբանէին։

ՍՈՒՐԱԿ

Առաջին, բարոյական հիւանդութեանց նիւթական դեղ կ՚ըլլայ թէ ոչ. երկրորդ՝ չգործադրուած դեղն օգտակար կրնայ ըլլալ թէ ոչ. երրորդ յանձնաժողովոյ կարգադրութիւնները օգուտ պիտի ընեն թէ ոչ։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Ինչ հանճարեղ մարդիկ, ապագային վերայ անգամ կը վիճաբանեն, ափսոս, չթողուց որ դարման մը որոշէին թերեւս մինչեւ ցարդ որդիս առողջացած էր։

ԲԱԲԻԿ

(Ռկոսէ) Վայ այն հիւանդին որոյ բԺշկութիւնը խենդերու յանձնուած է։

ՍՈՒՐԱԿ

Արդարեւ ցաւալի է։

ՏԵՍԱՐԱՆ Է·

ՆՈՑՆԻ ԵՒ ՎԵՀՈՒՆԱԿ

ՎԵՀՈՒՆԱԿ

(ուռանց ներկայ ֆոնոուղայ ուշադրութիւն ընելու) Գնաց անգութն, առանց աղաչանաց տնսալու։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

(Բարկութեամբ) Վե՛հունակ։

ՎԵՀՈՒՆԱԿ

(Շրջանակելով) Ամայն պիտի գտնեմ զինքը, ուր որ ալ ըլլայ։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

(Բարկութեամբ) Վե՛հունակ, չե՞ս լսեր ինձ։

ԲԱԲԻԿ

(Վեհունակի մոտենալով) Հայրդ է, քեզ կը կանչէ։

ՎԵՀՈՒՆԱԿ

Ինչ է, հայր իմ։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Ծանր ամբաստանութիւններ կ'ըլլան քեզ դէմ։

ՎԵՀՈՒՆԱԿ

(ուռանց հոգը խոտերուն ուշադրութիւն ընելու) Ո՜հ, արդեօք պիտի գտնե՞մ զինքը, պիտի տեսնե՞մ բազկաց մէջ այդ սիրուն աղաւնին։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

(Խոսի) Քեզ կ'ըսեմ, օրինաց եօթանասուն ութերորդ յօդուածն բռնաբարեր ես։

ՎԵՀՈՒՆԱԿ

(Նայելու) Հայր իմ, հայր իմ, պիտի ամուսնացնես զիս այնպէս չէ՞։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

(Կոպտութեամբ) Հարցմանցս չպատասխանե՞ս։

ՍՈՒՐԱԿ

Մի՛ զայրանաք, վեհափառ տէր, կը տեսնէք թէ յուզման մէջ է և ձեր խօսքերը չլսեր։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Լսէ, չլսէ, պէտք է պատասխանէ։

ՍՈՒՐԱԿ

(Ռկոսէ) Իրաւացի խօսքին ի՞նչ կրնամ ըսել·

ԲԱԲԻԿ

(Ծնկոտ։) Զլսուած խօսքին պատասխանը այսչափ կրնայ ըլլալ։

ՎԵՀՈՒՆԱԿ

(Ծնկան վերայ գալով և աղերսանօք) Կը սիրեմ հայր իմ. կը սիրեմ . . .

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Սիրելէ առաջ պէտք է հնազանդիլ ինձ և օրէնքը յարգել, փոխանակ այն մեծահանճար անձինքն որ հրաւիրած էի՝ վռընտելու։

ՎԵՀՈՒՆԱԿ

Հայր իմ, ե՛րբ պիտի ամուսնացնես զիս։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Դարձեալ ամուսնութիւն։

ՎԵՀՈՒՆԱԿ

Ոհ չես գիտեր հայր իմ, որչափ կը սիրեմ զինքը։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

Զո՞վ։

ՎԵՀՈՒՆԱԿ

Երկնային հրեշտակ մը, որոյ նմանը չկայ աշխարհիս վերայ։

ԲԱԲԻԿ

(Ծնկոտ։) Արդարեւ նմանը չկայ։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

(զարմանօք) Հրեշտակ մը . . .

ՎԵՀՈՒՆԱԿ

Այս հրեշտակն ուրիշներու նմանիր, հայր իմ, հաղիւ թէ տեսայ, յափշտակեց սիրտս։

ԲԱԲԻԿ

(Ծնկոտ։) Մինչեւ ցարդ կը կարծէի թէ հրեշտակները միայն հոգին կը յափշտակեն։

ՎԵՐԻԿԱԿՈՍ

(Ծնկոտ։) Աւա՛ղ, սկսաւ զառանցել. . . հրեշտակաց հետ կը խօսի, ալ ծանրացաւ վիճակը (Բարձր ա՜ռ Ս՜ուրբ։) Սուրբ Հոգի յանձնաժողովը հաւաքէ. օր ըստ օրէ որդւոյս հիւանդութիւնը կը սաստկանայ։

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՎԵՀՈՒՆԱԿ ԵՒ ԲԱԲԻԿ

ԲԱԲԻԿ

Ի՞նչ կայ, տէր իմ, այդ ի՛նչ յուսահատ դէմք է։

ՎԵՀՈՒՆԱԿ

Ա՜հ։

ԲԱԲԻԿ

Ի՛նչ, տէր իմ, դուք ալ սկսաք հառաչել։

ՎԵՀՈՒՆԱԿ

Այն կինը . . . այն կինը գնաց։

ԲԱԲԻԿ

Բնաւ մի՛ կասկածիք, տէր իմ. չկայ կին մը՝ որ ձեզ նման իշխանազունի մը սէրը անարդէ։

ՎԵՀՈՒՆԱԿ

Բայց նա մերժեց . . .

ԲԱԲԻԿ

Մի՛ խաբուիք տէր իմ, կնոջ մը խօսքերէն. նոցա սոլորութիւնն է հաւանութիւն տալէ առաջ մերժել. արդարեւ բերնով անկարելի է կ'ըսէր, բայց սիրտը . . .

ՎԵՀՈՒՆԱԿ

Ամբարտակ կու գայ, տեսնենք, ի՛նչ լուր կը բերէ։

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՎԵՀՈՒՆԱԿ, ԲԱԲԻԿ ԵՒ ԱՄԲԱՐՏԱԿ

ԱՄԲԱՐՏԱԿ

Քաջալերուեցէք, տէր իմ, յաջողեցայ դանել օրիորդին բնակած տունը։

ՎԵՀՈՒՆԱԿ

Ուրեմն կրնանք երթալ։

ԱՄԲԱՐՏԱԿ

Այո, տէր իմ, երբ որ կամիք։

ՎԵՀՈՒՆԱԿ

Ե՞րբ, միթէ կը հարցնե՞ս, կրնա՞մ վայրկեան մը սպասել։

ԱՄԲԱՐՏԱԿ

Երթանք ուրեմն։ (կը դիմի Վեհունակի հետ։)

ԲԱԲԻԿ

(առանձին) Կեցցես Ամբարտակ, ինչուդ պէտք է դաստիարակութիւն, ահաւասիկ շահաւոր արհեստ մը։

(Վարագոյրը կ'իջնէ)

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՀՐԱՊՈՅՐ ԵՒ ՇԱՒԱՐՇ

ՇԱՒԱՐՇ

Օրիորդ, իշխանազունը պիտի գայ։

ՀՐԱՊՈՅՐ

Ուստի՞ իմացար։

ՇԱՒԱՐՇ

Խնամակալը իմացուց ինձ։

ՀՐԱՊՈՅՐ

Ուրեմն պատրաստութիւն տեսնենք, շուտ իմացուր վարը մարդոց որ բաց 'ի նորին մեծութենէն, ոչ ոք ընդունեն ներս։

(Շաւարշ կը դնէ)

Ալ փափագանացս պիտի հասնիմ, վերջապէս երջանիկ պիտի ըլլամ... դուռը կը բախուի, ինքն է անշուշտ։ (Դեպ 'ի դուռը կը տարաջանայ, Գայլակ կը դիմաւորէ)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՀՐԱՊՈՅՐ, ԳԱՅԼԱԿ, ՑԵՏՈՑ ՇԱՒԱՐՇ

ԳԱՅԼԱԿ

Ո՛վ իմ թագուհիս, գթա՛ թշուառիս և մի՛ նախատեր...

ՀՐԱՊՈՅՐ

(Բարկութեամբ) Ի՛նչ, կը համարձակի՞ս դարձեալ տանս մէջ ոտք կոխել։

ԳԱՅԼԱԿ

Եթէ գիտնայիր պատճառն, այնչափ խստիւ չէիր դատապարտեր զիս։

ՀՐԱՊՈՅՐ

Օ՛ն, շուտ, դուրս ել. և մէկ մ'ալ զքեզ հոս չտեսնեմ։

ԳԱՅԼԱԿ

Գթա՛, օրիորդ, արդահատէ արտասուացս, մի՛ վռնտեր զիս անխղճաբար։

ՀՐԱՊՈՅՐ

(Դեռոսի) Հիմա իշխանիկս կու գայ, այս թշուառականն ալ ո՛սկից դէմս ելաւ։

ԳԱՅԼԱԿ

Ո՛հ, այն որ այս հրատապ աչուքներն, այս վեհապանծ յօնքերն, այս ծիրանի այտերը, այս ոսկեթել մազերը, այս գողտ-

ըիկ ձեռներն ունի, ի՛նչ կ՚ըսեմ, նոյն իսկ դեղեցկութիւնն անձնաւորեալ՝ պէ՞տք էր այս աստիճանի անգութ սիրտ մը ունենալ... աւա՛ղ, ծաղկանց թագուհին անդամ փչերէ ազատ չէ։

ՀՐԱՊՈՅՐ

Կամաւ դուրս պիտի կորսուի՞ս, եթէ ոչ, անարդ շան մը նման ծեծելով դուրս հանել տամ։

ԳԱՅԼԱԿ

Ո՛վ իմ թագուհիս, ահա կ՚երթամ. ե՞րբ հրամայեցիր ինձ և ես չհնազանդեցայ։ ահա կ՚երթամ, հանդարտ եղիր։ ահա կ՚երթամ, բայց պիտի ղջիս... այո՛...

ՀՐԱՊՈՅՐ

(անհամբերութեամբ) կ՚երթամ կ՚ըսես և դեռ հոս ես։

ԳԱՅԼԱԿ

Կ՚երթամ, թագուհիս, կ՚երթամ. բայց կ՚աղաչեմ, կը պաղատիմ, մեկնելէս առաջ թշուառ կենացս իբր միակ մխիթարութիւն ըսէ ինձ «կը սիրեմ դքեզ»։

ՀՐԱՊՈՅՐ

Դեռ կը համարձակի՞ս։

(Շուարած կը մնայ և կը դիտէ ԳԱՅԼԱԿ)

ԳԱՅԼԱԿ

Ո՛վ իմ թագուհիս, եթէ Ռափայէլի

վրէժինը ունենայի դքեզ միայն պիտի նկարէի, եթէ Հոմերոս մ՚ըլլայի դքեզ միայն պիտի երգեի։

ՇԱՒԱՐՇ

(Դէպ՝ ի՛ն) Խեղճ տղայ, դու ալ այս թակարդն ինկար։

ԳԱՅԼԱԿ

Բաբէ՛, 'ի զուր կը պաղատիմ։

ՀՐԱՊՈՅՐ

(ոտքերուն ՇՇՈՒՐՇ) Շաւա՛ղ, շուտ դուրս հանէ սա կոշտ մարդը։ (ԿԸ ԴԻՏԻ)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԳԱՅԼԱԿ ԵՒ ՇԱՒԱՐՇ

ԳԱՅԼԱԿ

Օ՛բիորդ, վերջին խօսք մ՚ալ...

ՇԱՒԱՐՇ

Է՛հ, է՛հ, շուտ դուրս կորսուէ։

ԳԱՅԼԱԿ

Գոնէ դուք դթացէք եղկելոյս...

ՇԱՒԱՐՇ

Հահ, հահ, հահ. թշուառ երիտասարդ, ի՛նչպէս ալ յորդ արտասուք կը թափէ, սակայն օր մը առաջ կը ծիծաղէր այլոց վերայ։

ԳԱՅԼԱԿ

Ո՛հ կը զղջամ և դառնապէս կը զղջամ։

ՇԱՒԱՐՇ

Թշուառ տղայ, դու ալ աւանակաց կարգը դասեցար։

ԳԱՅԼԱԿ

Ո՛հ չէ՞ք գիտեր, ի՛նչ է սէրը . . .

ՇԱՒԱՐՇ

Սակայն այսպէս խռֆած պառաւի մը սիրահարել . . . ի՛նչ էշութիւն։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԳԱՅԼԱԿ, ՇԱՒԱՐՇ ԵՒ ԾԱՌԱՅ ՄԸ

ԾԱՌԱՅ ՄԸ

Իշխանաղունը . . .

ՇԱՒԱՐՇ

(շշուկով) Ներս մտցուր (ասա Գայլակ) շուտ դուրս ել։

ԳԱՅԼԱԿ

Բայց . . .

ՇԱՒԱՐՇ

Եթէ վայրկեան մ'ալ դանդաղիս . . .

ԳԱՅԼԱԿ

Բայց կ'աղաչեմ. . .

ՇԱՒԱՐՇ

Հիմա աղաչանքը կը սորվեցնեմ (ծեծելով

դուրս կը վանէ) այս աստիճանի կատաղի սիրահար բնաւ տեսնուած չէ . . . Երթամ շուտ օրիորդին իմացնեմ իշխանաղունին դալուստը։

(կը դնէ)

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՎԵՀՈՒՆԱԿ ԵՒ ԱՄԲԱՐՏԱԿ

ՎԵՀՈՒՆԱԿ

Ամբարտակ, ո՛ւր է արդեօք օրիորդը, չեմ տեսներ զինքը։

ԱՄԲԱՐՏԱԿ

Հիմա կու գայ, տէր իմ։

ՎԵՀՈՒՆԱԿ

Բայց այսպէս ուշանալը բարի նշան մը չէ։

ԱՄԲԱՐՏԱԿ

Ահաւասիկ տէր իմ, ինքն է, հոս կու գայ։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՎԵՀՈՒՆԱԿ, ՀՐԱՊՈՑՐ ԱՄԲԱՐՏԱԿ ԵՒ ՇԱՒԱՐՇ

ՎԵՀՈՒՆԱԿ

Ո՛ւր ես, սիրելիդ իմ։

ՀՐԱՊՈՅՐ

Վեհազն տէր, դուք հոս . . .

ՎԵՀՈՒՆԱԿ

Այո եկայ օրիորդ, եկայ վերջին վճիռս լսելու. քու մէկ խօսքէն կախեալ է երջանկութիւնս կամ մահս. ըսէ ինձ, կը սիրե՞ս զիս, եթէ ոչ երթամ, միւս աշխարհին մէջ փնտռեմ երջանկութիւնը։

ՀՐԱՊՈՅՐ

(Ցկոսէ) Ո՛հ ի՛նչ կը լսեմ, ի՛նչ պատասխանեմ։

ՎԵՀՈՒՆԱԿ

Օ՛ն, մի՛ վարանիր, սիրելիդ իմ, վերջ տուր տարակուսանացս։

ԱՄԲԱՐՏԱԿ

(Կոմսց առ Վեհունակ) Տէր իմ, այդչափ մի՛ թախանձէք, օրիորդին ամօթխածութեանը կը դպչի՛ք։

ՇԱՒԱՐՇ

(Կոմսց առ Հրապոյր) Դժուարութիւններ յարուցէք որպէս զի սէրը սասականայ։

ՀՐԱՊՈՅՐ

(Կորդոնելով) Վեհա՛զնդ իշխան, դժուար է ինձ համար այդպիսի հարցման մը պատասխանել։

ԱՄԲԱՐՏԱԿ

(Կոմսց առ Վեհունակ) Քաջալերուեցէք տէր

իմ, հաւանութեան նշան կու տայ։

ՎԵՀՈՒՆԱԿ

Սիրուհիդ իմ, բնաւ մի՛ կասկածիր, անկեղծ է սէրս. այն դեղեցիկ վայրկենէն որ զքեզ տեսայ՝ մոռցայ ամէն ցաւերս, երջանկութիւն շնչեցի. նոյն վայրկեանէն՝ երեւակայութիւնս բորբոքեցաւ, դեղեցկութեան վերայ դաղափար մը ստացայ. կ՚ատէի զաշխարհ բայց այժմ կը սիրեմ զայն. երբեմն մարդատեաց էի իսկ արդ մարդասէր. անտանելի ձանձրոյթ մը և յուսահատութիւն մը կը մաշեցնէր հոգիս իսկ այժմ ապրիլ կը ցանկամ, թէ եւ դժոխային ցաւոց և սոսկալի տանջանաց ենթակայ ըլլամ, բաւական է որ զքեզ տեսնեմ. բայց աւա՛ղ, յոյսերս կը կորնչին, երջանկութիւնս կը թունաւորի։ Երբ կը մտածեմ որ թերեւս պիտի մերժես սէրս, պիտի չլես ինձ, պիտի անարդես աղաչանքս . . .

ՇԱՒԱՐՇ

(Կոմսց առ Հրապոյր) Օրիորդ, սովորական պաղարիւնութիւններդ չկորսնցնէք եթէ կ՚ուզէք սիրոյ հուրը բորբոքեցնել իւր սրտին մէջ։

ՀՐԱՊՈՅՐ

Կը հաւատամ՝ ձեր խօսքերուն անկեղծութեանը, բայց ձեր հաճոյքը կատարելու համար պատիւս չեմ կրնար զոհել։

ԱՄԲԱՐՏԱԿ

(Կամաց առ Վեհուհի) Ցաղթեցիք տէր իմ, հաւանութեան նշան է։

ՎԵՀՈՒՆԱԿ

Ա՛հ, օրիորդ, եթէ ճանչնայիր թէ ի՛նչ է սէրն, եթէ զգայիր նորա ազդեցութիւնը. այն ժամանակ կրնայիր ենթադրել թէ ի՛նչ հրոյ մէջ կը տագնապիմ։

ՀՐԱՊՈՅՐ

Ի բաց, 'ի բաց յինէն, այդպիսի մեղապարտ սէր մը։

ՎԵՀՈՒՆԱԿ

Ո՛հ, սուրբ է սէրն։

ՀՐԱՊՈՅՐ

Երբ օրինաւոր է։

ՇԱՒՍՐԾ

(Կամաց առ Հրապոյր) Լաւ, լաւ։

ՎԵՀՈՒՆԱԿ

Օրիորդ. կամքդ պիտի կատարուի։ (առ Ամբարտակ) Երթանք, երթանք դաստիարակդ իմ։

ՏԵՍԱՐԱՆ Է։

ՀՐԱՊՈՅՐ ԵՒ ՇԱՒՍՐԾ

ՀՐԱՊՈՅՐ

(ապշութեամբ) Գնաց, Շաւա՛րշ, գնաց և թերեւս մէկ մ'ալ չդայ։

ՇԱՒՍՐԾ

Պիտի դայ, օրիորդ, պիտի դայ դարձեալ։

ՀՐԱՊՈՅՐ

Աւա՜ղ, պիտի չդայ, վերջին խօսքը սարսափ կ'ազդէ ինձ՝ ո՛հ դու պատճառ եղար որ չափազանց խստութեամբ վարուեցայ։ կորսնցուցիր զիս թշուառական, հեռացիր, մ'երեւար աչքիս։

ՇԱՒՍՐԾ

Ցիշեցէք օրիորդ թէ ես Շաւարշն եմ և դուք զիս վռնտելու իրաւունքը կորսնցուցած էք։

ՀՐԱՊՈՅՐ

Երբէք, կորիր դժոխոց ոգի, անիծեալ ըլլաս։

ՇԱՒՍՐԾ

Լաւ, կ'երթամ ուրեմն, բայց պիտի զղջաք։

ՀՐԱՊՈՅՐ

(գեռնելով որ կ'երթայ) Կեցիր, կեցիր, Շաւարշ։

ՇԱՒԱՐՇ

Ոչ, ոչ. թողէք երթամ։

ՀՐԱՊՈՅՐ

Կեցի՛ր կ'ըսեմ։

ՇԱՒԱՐՇ

Ա՛յս պիտի ըլայ եղեր իմ հաւատարիմ ծառայութեանցս վարձատրութիւնը։

ՀՐԱՊՈՅՐ

Ոչ, ոչ...

ՇԱՒԱՐՇ

Ալ ինձ պէտք չունիք օ՛րիորդ. դեղահատերը սպառեցան այնպէս չէ՞։

ՀՐԱՊՈՅՐ

Ո՛հ. ոչ. ներէ Շա՛ւարշ։

ՇԱՒԱՐՇ

(ծրար մը տալով) Առէք օ՛րիորդ. առէք այս ծրարն ալ և բացէք. ճանչցէք ձեր մօրը վերջին կամքը. ալ իմ պաշտօնս դադրած է։

ՀՐԱՊՈՅՐ

Ի՞նչ ըսել կ'ուզես։

ՇԱՒԱՐՇ

Խզեցէք այդ կնիքը. և տեսէք։

ՀՐԱՊՈՅՐ

(ծրարը բանալով) Ի՞նչ կը տեսնեմ. ծալուած թուղթ մը կայ միայն ասոր մէջ։

ՇԱՒԱՐՇ

Եւ ձեր մօրը գերն ու ստորադրութիւնը կը կրէ. այնպէս չէ՞... կը խոստովի՛ք օրիորդ։

ՀՐԱՊՈՅՐ

(կարդալով) «Որդեակ իմ։

Ծնայ. ապրեցայ. և ահա կը մեռնիմ.. ունայնութիւն, վաղանցուկ երազ մը... այն ամեն բաներէն որ երջանկութիւն կը յուսայի՝ թշուառութեանս պատճառ եղան. երիտասարդութիւնս խաբուելով և չափահասութիւնս զղջալով անցուցի՝, խաբուեցայ վասն զի անսացի կրիցս, զղջացի բայց շատ ուշ։ Անողոք մահը կը մերձենայ. ազատութեան ժամը հնչեց. բայց աւաղ, սիրելի Հրապոյրէս պիտի զատուիմ. ա՛ղջիկս՝ դքեզ մինակ պիտի թողում կը սարսափիմ երբ կը մտածեմ թէ թերեւս դու ալ ինձ նման կրիցդ զոհ պիտի ըլաս, դեղեցկութիւնը փառքը և հարստութիւնը քու աչերդ ալ պիտի շլացնեն... դու ալ ինձ նման ձախող ամուսնութեան մը նչաւակ պի-

տի ըլլաս · որդեակ իմ եթէ երջանիկ ըլլալ կ'ուզես, օգուտ քաղէ իմ քառասնամեայ փորձառութենէս և մի խաբուիր դու ալ ինձ նման · զգուշացիր այն ամեն սնապարծ երիտասարդաց խոստումներէն և արտաքին ցոյցերէն · արհամարհէ նոցա հարստութիւնը, ամուսնացիր այնպիսի անձի մը հետ որ տեղեակ ըլլայ երջանկութեան սկզբանց որք են աշխատասիրութիւն, ժուժկալութիւն և խաղաղ ամուսնութիւն։

Ահաւասիկ իմ վերջին կամքս։»

ՇԱՒԱՐՇ

Օրիորդ պիտի յարգէք ձեր մօրը վերջին կամքը։

ՀՐԱՊՈՅՐ

Ո՛հ, սուրբ է ինձ համար մօրս յիշատակը։

ՇԱՒԱՐՇ

Ուրեմն պիտի գործադրէք։

ՀՐԱՊՈՅՐ

Թէեւ մեռնիլ հարկ ըլլայ։

ՇԱՒԱՐՇ

Լաւ ուրեմն, այս վերջին ծառայութիւնն ալ պիտի կատարեմ օ՛րիորդ։

ՊԱՏԿԵՐ Ա.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՇԱՒԱՐՇ, ԴԱՅԼԱԿ ԵՒ ՍԻՐԱՀԱՐՓ

Բ · ՍԻՐԱՀԱՐ

Վերջապէս օրիորդը յիշեց զիս · չորս ամսէ 'ի վեր երեսուն տումնակ խրկեցի, անդուրեն ոչ միայն բնաւ չպատասխանեց, այլ և մէկ քանին առանց բանալու ետ խրկեց · այսչափ անարգանք, այսչափ նախատինք և դեռ կը սիրեմ և պիտի սիրեմ յաւիտեան · նորա ձեռքն է սիրոս, զոր անհնար է կորզել։

Ա · ՍԻՐԱՀԱՐ

Սիրուն հրեշտակս, կարծես թէ օր ըստ օրէ կը դեղեցկանայ · ամբողջ օր մը՝ն է որ տեսած չեմ, արդեօք ո՛րչափ դեղեցկացած է։

Բ · ՍԻՐԱՀԱՐ

Ո՛հ, դեղեցկութեան թագուհին անդամ եթէ տեսնէ օրիորդը՝ պիտի նախանձի։

Դ · ՍԻՐԱՀԱՐ

Երբ օրիորդը կը խօսի, մուսայք անդամ կը լռեն։

Դ · ՍԻՐԱՀԱՐ

Անցեալ օր անձամբ դիտեցի, օրիորդին խօսած առեն աստեղք ղ ադրեցուցին իրենց ընթացքը, նորա ձայնը լսելու համար։

Ե · ՍԻՐԱՀԱՐ

Նոյն միջոցին ես ալ տեսայ զանոնք և մինչև անդամ նշմարեցի հեռուանց թէ գիսաւոր աստղ մ'ալ շտապաւ կը վազէր, որպէս զի ինքն ալ ունկնդիր ըլլայ։

Դ · ՍԻՐԱՀԱՐ

Եւ զարմանալին այն է որ նոյն օրէն 'ի վեր աստեղաց ոմանց ժամանակին որոշեալ տեղը չգտնուելուին անհամաձայնութիւն մը ծագած է մէջերնին որ հետզհետէ սաստկանալու վրայ է։

Ե · ՍԻՐԱՀԱՐ

Ուրեմն այդ պատճառաւ էր որ համաստեղութեան շարքը աւրուելով քիչ մնաց որ արեւելքը արեւմուտքին հետ պիտի չփոթէի։

Դ · ՍԻՐԱՀԱՐ

Այո, այնպէս ըլլալու է, որովհետեւ

անցեալ դիշեր ճանապարհորդին մէկը, երբ եկաւ հարցուց ինձ թէ, ո՞ր կողմն է հիւսիս, բաւական դժուարութիւն քաշեցի, համաստեղութեանց մէջ մեծ արջը գըտնելու համար։

Դ · ՍԻՐԱՀԱՐ

Ուրեմն առաջուց ծանօթութիւն ունէիք մեծ արջին հետ որ անմիջապէս ճանչցաք։

Ա · ՍԻՐԱՀԱՐ

Անտարակոյս, երկար առենէ 'ի վեր կը ճանչնայի, բայց բեւեռային աստղին լաւ ծանօթութիւն մը չունենալուս՝ պէտք եղաւ հաշուել· արդարեւ դեղեցիկ խնդիր մ'էր զոր ուզեցի լուծել, բայց խնդիրը երթալով դժուարացաւ և բնութիւնը փոխեց· եթէ գրահաշիւն օգնութեան չհասնէր՝ անլուծելի պիտի մնար· վերջապէս երկար աշխատութենէ ետքը լուծեցի խնդիրը բայց դժբախտաբար արդէն արեգակը ծագած ըլլալով, մեծ արջը դտնել անհնար եղաւ։

Դ · ՍԻՐԱՀԱՐ

Եւ ճանապարհորդը դեռ կ'սպասէր։

Ա · ՍԻՐԱՀԱՐ

Անմիտը, տեսնելով որ գործողութիւնը երկարեցաւ, յուսահատելով մեկնած էր։

ԳԱՅԼԱԿ

(Դէմ՝ Ի.) Որչափ ալ ասաեղագէտ կայ հոս։

Զ. ՍԻՐԱՀԱՐ

Պա՛ռնայք, նկատելով փիլիսոփայութեան հին դրութիւնը՝ քանի մը վերանորոգութիւններ ելի անցեալ օր. այսուհետեւ հոգեբանութիւնը փոխանակ երեքի՝ չորս գլխաւոր մասերէ կը բաղկանայ, այսինքն զգայնութիւն, իմացութիւն, կամք և գործունէութիւն։

Բ. ՍԻՐԱՀԱՐ

Ես ալ անցեալ օր բնագիտութեան մէջ էն մագնիսականութիւնը ջնջեցի. իսկ ձայնը համառօտելով իբր լուսոյ յաւելուած մը նշանակեցի։

Ա. ՍԻՐԱՀԱՐ

Այո, այո, դիտութիւնները պարզելու է. ես ալ այս օրերս միտք ունիմ դրահաշիւը թուաբանութենէն առաջ նշանակել, որպէս զի աշակերտք դիւրութեամբ լուծեն թուաբանական խնդիրները։

Գ. ՍԻՐԱՀԱՐ

Անշուշտ կարդացի՛ք պարոն, Մատենագրական դրութիւն անուամբ նոր գիրք մը զոր այս օրերս հրատարակեցի։

Բ. ՍԻՐԱՀԱՐ

Այնչափ ճանճրանալի թուեցաւ ինձ որ հազիւ թէ թուղթ մը կարդացի։

Գ. ՍԻՐԱՀԱՐ

Անտարակոյս՝ համբակաց տաղտկալի կը թուին իմաստալից դրութիւնները։

Բ. ՍԻՐԱՀԱՐ

Եւ ոչ իմաստ մը կրցայ գտնել։

Գ. ՍԻՐԱՀԱՐ

Տգիտութեան պատճառաւ։

Բ. ՍԻՐԱՀԱՐ

Պարոն, անճոռնի գրքեր չինելով՝ ինքզինքիդ դրագէտ մի՛ կարծէք։

Գ. ՍԻՐԱՀԱՐ

Դուք ալ, դրագէտ ձեւանալու համար այլոց դրութիւնները վատաբար մի՛ պարսաւէք.

Բ. ՍԻՐԱՀԱՐ

Պարոն, պատիւս կը պահանջեմ։

Գ. ՍԻՐԱՀԱՐ

(առ Գայլակ) Դուք ըսէք պա՛րոն, իրաւունք ունի՛մ թէ ոչ։

Բ. ՍԻՐԱՀԱՐ

(առ Գայլակ) Յանուն արդարութեան, պատասխանեցէք պա՛րոն։

ԳԱՅԼԱԿ

Պարոնայք, չեմ կարծեր թէ այդչափ բարձր դիտութեանց տեղեկութիւն ունենամ։

Ա. ՍԻՐԱՀԱՐ

Հոդ չէ, ես կը քննեմ։

ԳԱՅԼԱԿ

(Ձեռքէ) Ի՞նչ, քննութիւն ալ տալու է։

Ա. ՍԻՐԱՀԱՐ

Ո՞րն է ամենէն պինդ մարմինը։

ԳԱՅԼԱԿ

Ըստ իմ կարծեաց՝ վաչխառուայ երեսի կաշին ըլլալու է։

ԱՄԵՆՔԸ

Հահ, հահ, հահ։

Ա. ՍԻՐԱՀԱՐ

Լաւ, ջերմութիւնը ո՞ր մարմիններուն աւելի շուտ կ՚աղդէ։

ԳԱՅԼԱԿ

Եթէ չեմ սխալիր, թեթեւ երիտասարդաց ուղեղին։

ԱՄԵՆՔԸ

Հահ, հահ, հահ։

ՇԱՒԱՐՇ

Է՛ պարոնայք, դուք ձեր դիտութեամբն կը պարծիք և կը հպարտանաք, լաւ, հարցում մ՚ալ ես ձեզ պիտի ուղղեմ, տեսնենք ո՛վ ճշդիւ պիտի պատասխանէ։

Զ. ՍԻՐԱՀԱՐ

Կ՚աղաչեմ ըսէք, ձեր այդ հարցումը բնակա՞ն է թէ բնաբանական։

ՇԱՒԱՐՇ

Ոչ մէկը և ոչ միւսը. ըսէք ինձ պարոնայք, երջանկութիւնը ինչո՞վ կ՚ըլլայ,

Ա. ՍԻՐԱՀԱՐ

(Ձեռքէ) Երջանկութիւնը, իմ գիտցածս տակով կ՚ըլլայ. այո, այո, ըսեմ. (Բարձր) Պարո՛ն՝ երջանկութիւնը սատակի առատութեամբ կ՚ըլլայ։

ՇԱՒԱՐՇ

Հահ, հահ, հահ, անհաւասիկ ադամը։

Զ. ՍԻՐԱՀԱՐ

Այս նիւթին վերայ Տիմոթենէս և Դիկերոն բաւական խօսած են. Արիստոտել և Լէյպնից բաւական վիճաբանած են այս նիւթին վերայ. Լոք ալ մեծամեծ հատորներ ունի այս նիւթին վերայ. վերջապէս ամեն բարոյագէտներն ու տնտեսագէտները զանազան դրութիւններ հաստատած են . . .

ՇԱՒԱՐՇ

Ձեր կարծիքը, միայն ձեր անձնական կարծիքը կը հարցնեմ.

Զ. ՍԻՐԱՀԱՐ

Ես Լոքի դրութիւնը լաւագոյն կը համարիմ։

ՇԱՒԱՐՇ

Կաղաչեմ յստակ խօսեցէք որպէս զի կարենամ հասկընալ. ես Լոքի դրութենէն տեղեկութիւն չունիմ։

Զ. ՍԻՐԱՀԱՐ

Լաւ, կրքերը յաղեցնելով։

ՇԱՒԱՐՇ

Հահ, հահ, հահ, ահաւասիկ տղայամիտը։

Զ. ՍԻՐԱՀԱՐ

Պարոն, ինձ նման անձի մը տղայամիտ...

ՇԱՒԱՐՇ

Հանդարտեցէք, պարոն, հանդարտեցէք։

ԳԱՅԼԱԿ

(Դէ՜...) Պասպ բան մը կ'ըսէր, թերեւս ճշմարիտ են խրատները, փորձառու մարդ մ'էր. (Բ՜...) Պարո՛ն Շաւարշ, երջանկութիւնը աշխատասիրութեամբ, ժուժկալութեամբ և խաղաղ ամուսնութեամբ կ'ելլայ։

ՇԱՒԱՐՇ

Վերջապէս ճշմարիտ իմաստունը գտայ. կեցցես Գա՛յլակ, յաղթանակեցիր։ Գիտցէք պարոնայք, թէ օրիորդը խոստացած էր ամուսնանալ անոր հետ որ այս պատասխանը տայը։

ԳԱՅԼԱԿ

Ի՛նչ կը լսեմ... ուրեմն, ուրեմն պիտի ամուսնանամ օ...րի...որ...դ ին հետ։

Բ. ՍԻՐԱՀԱՐ

Ես ալ նոյնը պիտի ըսէի։

ՇԱՒԱՐՇ

Շատ ուշ, բարեկամ, շատ ուշ։

Գ. ՍԻՐԱՀԱՐ

Սակայն չեմ՝ ընդունիր այդ ընտրութիւնը։

ՇԱՒԱՐՇ

Դժբախտաբար ձեր ընդունելութենէն կախեալ չէ օրիորդին որոշումը։

Դ. ՍԻՐԱՀԱՐ

Ինչ, այս ապուշին հետ ամուսնանայ այն անղուդական օրիորդը, անկարելի է։

ՇԱՒԱՐՇ

Է՛, ըստ պարադային, երբեմն կարելի է։

ԳԱՅԼԱԿ

Երթամ, աւետեմ օրիորդին ինդակցութիւնս։

(Երթալու դէպքին հրաւէր կը տա՜...)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՆՈՅԲԻՆ ԵՒ ՀՐԱՊՈՅՐ

ԳԱՅԼԱԿ

Օրիորդ, շնորհակալ եմ քոյ բարեսիրութենէն, ալ երջանկութիւնս կատարեալ է, յաւիտեան երախտապարտ եմ...

ՀՐԱՊՈՅՐ

Ի՞նչ ըսել կ՚ուզես · ի՞նչ է այս Շաւարշ

ՇԱՒՈՒՐՇ

Տի՛կին, ձեր մօրը կասկը գործադրուած է և ձեր ապագայն որոշեալ։

ՀՐԱՊՈՅՐ

(անյկոնտ) Ի՞նչպէս։

ՇԱՒՈՒՐՇ

(Գոչակը ցոյցնելով) Ինքը։

ՀՐԱՊՈՅՐ

(Գեղոռոյ) Երկինք · · · բայց ոչ, անկարելի է։

ՇԱՒՈՒՐՇ

(կոմոց տո Հրապոյր) Օ՛ղիորդ, եթէ այս ամուսնութիւնը չկատարես՝ կորսուած ես։ Իշխանազունը ձեր հետն ամուսնանալու արտօնութիւն ուղելուն համար բանտարկուած է · · ·

ՀՐԱՊՈՅՐ

Ի՞նչ կ՚ըսես Շաւարշ։

ՇԱՒՈՒՐՇ

(կոմոց տո Հրապոյր) Այո, և զձեզ քննութեան պիտի ենթարկեն եթէ անմիջապէս ամուսնանալով կասկածները չկարատէք։

ՀՐԱՊՈՅՐ

Բայց այս հրեշին հետ ամուսնանալ անկարելի է։

ՇԱՒՈՒՐՇ

(կոմոց տո Հրապոյր) Ընտրեցէք մէկը։

ՀՐԱՊՈՅՐ

Ո՛րն ընտրեմ, ամենքն ալ դժոխային դեւեր կը թուին ինձ։

ՇԱՒՈՒՐՇ

(կոմոց տո Հրապոյր) Ուրեմն յիշեցէք ձեր մօրը վերջին կամքը, օրիորդ, ամուսնացէք Դայլակայ հետ, թերեւս այսպէս պիտի կարենաք երջանիկ կեանք մը վարել · ա՛ղիտե ինչ ալէտալի օրեր պիտի անցընէք այս սընապարծներուն մէկուն հետ ամուսնանալով։

ՀՐԱՊՈՅՐ

Աւա՜ղ · · · կրնչեցան յոյսերս · · · 'ի զուր մաքառեցայ բախտին դէմ · · ·

ՇԱՒՈՒՐՇ

(կոմոց տո Հրապոյր) Օ՛ն, օրիորդ, վտանգը կը մերձենայ, ըսէք, կը հաւանի՞ք, եթէ ոչ կ՚արհամարհէք ձեր մօրը վերջին կամքը։

ՀՐԱՊՈՅՐ

Ուրիշէն կատարել մօրս վերջին կամքը։

ԳԱՅԼԱԿ

(Ծերնոլով Հրապոյրի) Օ՛ղիորդ, ալ զիս պիտի չվռնտէք այնպէս չէ՞։

(Վարագոյրը կ՚իջնէ)

Վ Ե Ր Ջ

ՀՀ Ազգային գրադարան
NL0367055

57800